



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

### ՀՐԱՄԱՆ

No 74 -Ն

«03» հուլիսի 2023 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՔԻՄԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ  
8-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 30-րդ  
հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատությունների «Քիմիա» առարկայի  
8-րդ և 11-րդ դասարանների առարկայական ծրագրերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

7/3/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169



Հավելված  
ՀՀ կրթության, գիտության,  
մշակույթի և սպորտի նախարարի  
2023 թվականի հուլիսի 3 -ի  
N 74 -Ն հրամանի

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՔԻՄԻԱ»  
ԱՌԱՐԿԱՅԻ 8-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

**ՔԻՄԻԱ  
8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

Թեմա 1
Ատոմի էլեկտրոնային կառուցվածք
Հիմնական նպատակ
Զարգացնել գիտելիքներ ատոմի էլեկտրոնային կառուցվածքի վերաբերյալ:
Վերջնարդյունքներ
<ol style="list-style-type: none"><li>1. ՔՑ.ՆՄԲ.ԱՏՆ.1 Նկարագրի և էլեկտրոնային բանաձևերի միջոցով պատկերի ատոմում էլեկտրոնների բաշխումը ըստ էներգիական մակարդակների առաջին երեք պարբերությունների համար :</li><li>2. ՔՑ.ՆՄԲ.ԱՏՆ.2 Պարզաբանի քիմիական տարրի ատոմի էներգետիկ մակարդակների թվի կապը պարբերության համարի հետ:</li><li>3. ՔՑ.ՆՄԲ.ԱՏՆ.4 Սահմանի վալենտային շերտ և վալենտային էլեկտրոններ հասկացությունները :</li></ol>

Բովանդակություն	
1. Էլեկտրոնների բաշխումը ատոմում:	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
1. Գործնական աշխատանք 1: Վարժությունների և խնդիրների լուծում (1-35 տարրերի ատոմների համար)	<ol style="list-style-type: none"> <li>1. Օրինաչափություններ: Էլեկտրոնների լրացումը ըստ Էներգիական մակարդակների և ենթամակարդակների կատարվում է օրինաչափորեն, որոշակի սկզբունքներով:</li> <li>2. Էներգիա և կյուբ: Վալենտային Էլեկտրոնների Էներգիան ատոմում առավելագույնն է:</li> <li>3. Կառուցվածք և գործառույթ: Վալենտային շերտի Էլեկտրոնները մասնակցում են քիմիական կապերի առաջացմանը:</li> </ol>
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Կարողանա կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր (պահանջվող) գաղափարները: Ֆիզիկա: Պատկերացում ունենալ Էլեկտրոնի մասին:	
Կապը Հանրակրթության Չափորոշի Վերջնարդյունքների հետ	
Հ5, Հ6, Հ7, Հ9, Հ27, Հ28, Հ33	

Թեմա 2
Քիմիական կապ
Հիմնական նպատակ
Ձևավորել գիտելիքներ քիմիական կապի հիմնական տեսակների վերաբերյալ:
Վերջնարդյունքներ
1. Թ8.ՆՄԲ.ԱՏՆ.5 Որոշի վալենտային Էլեկտրոնների թիվը և ցույց տա դրանց կապը պարբերական աղյուսակում քիմիական տարրի խմբի համարի հետ:

2. ԹՑ.ՆՄԲ.ԱՏՆ.6 Սահմանի և կիրառի օկտետի (ութնյակի) կանոնը:
3. ԹՑ.ՆՄԲ.ԱՏՆ.7 Բացատրի քիմիական տարրի էլեկտրաբացասականությունը հասկացությունը, որպես մոլեկուլում քիմիական կապերի էլեկտրոնները դեպի իրեն ձգելու ունակություն:
4. ԹՑ.ՆՄԲ.ԱՏՆ.8 Ներկայացնի քիմիական տարրերի էլեկտրաբացասականության փոփոխությունը պարբերական աղյուսակի խմբերում և պարբերություններում:
5. ԹՑ.ՆՄԲ.ԱՏՆ.9 Սահմանի տարրի օքսիդացման աստիճան հասկացությունը և որոշի այն միացություններում:
6. ԹՑ.ԿԿՅ.ԻԿ.1 Սահմանի իոն, անիոն և կատիոն հասկացությունները:
7. ԹՑ.ԿԿՅ.ԻԿ.2 Սահմանի իոնային կապ հասկացությունը:
8. ԹՑ.ԿԿՅ.ԻԿ.3 Պատկերի որոշ երկտարր միացությունների իոնային կապի կետ-խաչային դիագրամը և դրանց առաջացման սխեմաները:
9. ԹՑ.ԿԿՅ.ԻԿ.4 Կազմի որոշ իոնային միացությունների բանաձևեր տրված իոններից:
10. ԹՑ.ԿԿՅ.ԻԿ.5 Ճանաչի իոնային բյուրեղավանդակի գծապատկերը, NaCl օրինակի վրա:
11. ԹՑ.ԿԿՅ.ԻԿ.6 Ներկայացնի իոնային միացությունների ընդհանուր ֆիզիկական հատկությունները (պինդ ագրեգատային վիճակ, հալման բարձր ջերմաստիճան, էլեկտրահաղորդականություն):
12. ԹՑ.ԿԿՅ.ԻԿ.7 Գործնականում իրականացնի՝
  - 1) իոնային և ոչ իոնային միացությունների էլեկտրահաղորդականության ուսումնասիրում,
  - 2) իոնների շարժի ուսումնասիրություն հաստատուն հոսանքի ազդեցությամբ, պղնձի(II) քրոմատի օրինակով:
13. ԹՑ.ԿԿՅ.ԿԿ.1 Սահմանի կովալենտ կապ հասկացությունը, որպես էլեկտրաբացասականությամբ իրարից քիչ տարբերվող քիմիական տարրերի միջև առաջացող կապ:
14. ԹՑ.ԿԿՅ.ԿԿ.2 Պատկերի որոշ երկտարր միացությունների կովալենտ կապի կետ-խաչային դիագրամը (պատկերը) և դրանց առաջացման սխեմաները:
15. ԹՑ.ԿԿՅ.ԿԿ.3 Սահմանի բևեռային և ոչ բևեռային կովալենտ կապ հասկացությունները:
16. ԹՑ.ԿԿՅ.ԿԿ.4 Տարբերակի կովալենտ և իոնային կապերը, ինչպես նաև կովալենտ բևեռային և ոչ բևեռային կապերը:

Բովանդակություն	
1. Օկտետի (ութնյակի) կանոն: 2. Իոնային կապ: 3. Կովալենտային կապ:	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
1) Գործնական աշխատանք 1: Վարժությունների և խնդիրների լուծում 2) Լաբորատոր աշխատանք 1: Իոնային և ոչ իոնային միացությունների էլեկտրահաղորդականության որոշում 3) Լաբորատոր աշխատանք 2: Իոնների շարժի ուսումնասիրություն հաստատուն հոսանքի ազդեցությամբ, պղնձի(II) քրոմատի օրինակով: 4) Թեմատիկ գրավոր աշխատանք:	1) Օրինաչափություններ: Քիմիական տարրերի էլեկտրաբացասականությունը պարբերություններում և խմբերում փոփոխվում է օրինաչափորեն: 2) Կառուցվածք և գործառույթ: Իոնական կապը պայմանավորում է իոնական միացությունների ընդհանուր հատկությունները: 3) Կայունություն և փոփոխություն: Քիմիական տարրերը ձգտում են լրացնել իրենց արտաքին էներգիական մակարդակը ութ էլեկտրոնով (օկտետ), ինչը բերում է էներգիապես կայուն վիճակի:
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Կարողանա կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր (պահանջվող) գաղափարները: Ֆիզիկա: Պատկերացում ունենալ լիցքերի ձգողության և վանողության մասին: Հասկանալ իոնների տեղաշարժը հաստատուն էլեկտրական հոսանքի ազդեցությամբ:	
Կապը Հանրակրթության Չափորոշչի Վերջնարդյունքների հետ	
Հ4, Հ5, Հ6, Հ7, Հ8, Հ9, Հ27, Հ28, Հ30, Հ33, Հ34, Հ47	

Թեմա 3
Անօրգանական նյութերի դասակարգում

<p>Հիմնական նպատակ</p>
<p>Ձևավորել և զարգացնել գիտելիքներ անօրգանական միացությունների հիմնական դասերի վերաբերյալ:          Չարգացնել գործնական հմտություններ անօրգանական միացությունների փոխարկումների օրինակներով:</p>
<p>Վերջնարդյունքներ</p>
<ol style="list-style-type: none"> <li>1. Ք8.ՆԱԲ.ՆՏ.1 Տարբերի անօրգանական միացությունների հիմնական դասերը՝ սահմանելով օքսիդները, հիմքերը, թթուները և աղերը և դասակարգի նյութերը:</li> <li>2. Ք8.ՆԱԲ.ՆՏ.2 Ներկայացնի օքսիդների, հիմքերի, թթուների և աղերի անվանակարգը:</li> <li>3. Ք8.ՆԱԲ.ՆՏ.3 Ներկայացնի և համեմատի անօրգանական միացությունների հիմնական դասերի ֆիզիկական և քիմիական հատկությունները՝ գրելով.             <ol style="list-style-type: none"> <li>1) հիմնային օքսիդների փոխազդեցությունը ջրի, թթուների, թթվային օքսիդներ հետ,</li> <li>2) թթվային օքսիդների փոխազդեցությունը ջրի, հիմքերի, հիմնային օքսիդների հետ,</li> <li>3) նոսր թթուների(աղաթթու, ծծմբական և ազոտական թթուներ) փոխազդեցությունը մետաղների, հիմքերի և կարբոնատների հետ,</li> <li>4) հիմքերի (նատրիում, կալիումի և կալցիումի հիդրօքսիդներ) փոխազդեցությունը թթուների և թթվային օքսիդների հետ,</li> <li>5) աղերի փոխազդեցությունը մետաղների, ալկալիների հետ և կարբոնատների քայքայման ռեակցիաների հավասարումները:</li> </ol> </li> <li>4. Ք8.ՆԱԲ.ՆՏ.4 Ներկայացնի օքսիդների, հիմքերի, թթուների և աղերի ստացման հիմնական եղանակները՝ գրելով համապատասխան ռեակցիաների հավասարումները.             <ol style="list-style-type: none"> <li>1) օքսիդների ստացումը՝ պարզ նյութերի և թթվածնի փոխազդեցությունից,</li> <li>2) լուծելի հիմքերի ստացումը հիմնային օքսիդների և ջրի փոխազդեցությունից,</li> <li>3) թթվածնավոր թթուների ստացումը թթվային օքսիդների և ջրի փոխազդեցությունից,</li> </ol> </li> </ol>

- 4) անթթվածին թթուների ստացումը ջրածնի և համապատասխան պարզ նյութի փոխազդեցության գազային արգասիքի ջրում լուծման ճանապարհով,
- 5) աղերը չեզոքացման ռեակցիայով:
- 5. Ք8.ՆԱԲ.ՆՏ.5 Ներկայացնի և գործնականում իրականացնի անօրգանական միացությունների ծագումնաբանական կապը, օրինակ՝ կալցիումի օքսիդ→կալցիումի հիդրօքսիդ→կալցիումի սուլֆիտ→ծծմբայինն թթու←ծծմբի(IV) օքսիդ:
- 6. Ք8.ՆԱԲ.ՆՏ.6 Գործնականում իրականացնի անօրգանական միացությունների հիմնական դասերի ներկայացուցիչների (SO<sub>2</sub>, CaO, NaOH, HCl, NaCl) ջրային լուծույթների ազդեցության ուսումնասիրություն հայտանյութերի (ֆենոլֆտալեին, մեթիլնարնջագույն և լակմուս) գույնի փոփոխության վրա:
- 7. Ք8.ՆԱԲ.ՆՏ.7 Կիրառի անօրգանական միացությունների հիմնական դասերի մասին ստացած գիտելիքները վարժությունների և խնդիրների լուծման համար:

**Բովանդակություն**

- 1. Անօրգանական միացությունների հիմնական դասեր:
- 2. Անօրգանական միացությունների հիմնական դասերի ծագումնաբանական կապ:

Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> <li>1. Գործնական աշխատանք 1: Վարժությունների և խնդիրների լուծում:</li> <li>2. Լաբորատոր աշխատանք 1: Անօրգանական նյութերի ծագումնաբանական կապը, օրինակ՝ կալցիումի օքսիդ→կալցիումի հիդրօքսիդ→կալցիումի սուլֆիտ→ծծմբայինն թթու←ծծմբի(IV) օքսիդ:</li> <li>3. Լաբորատոր աշխատանք 2: Անօրգանական նյութերի հիմնական դասերի ներկայացուցիչների (SO<sub>2</sub>, CaO, NaOH, HCl, NaCl) ջրային լուծույթների</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>1. Օրինաչափություններ: Անօրգանական միացությունների հատկությունները պայմանավորված են դրանց կառուցվածքով (թթու՝ H<sub>n</sub>R, հիմք՝ Me(OH)<sub>n</sub> և այլն):</li> <li>2. Պատճառ և հետևանք: Անօրգանական միացությունների հիմնական դասերի միջև առկա է ծագումնաբանական կապ, ինչը արտահայտվում է քիմիական փոխարկումներով:</li> </ul>

<p>ազդեցության ուսումնասիրություն հայտանյութերի (ֆենոլֆտալեին, մեթիլնարնջագույն և լակմուս) գույնի փոփոխության վրա:</p> <p>4. Խմբակային հետազոտական աշխատանք և ներկայացում կենցաղում և/կամ գյուղատնտեսությունում օգտագործվող անօրգանական նյութերի վերաբերյալ:</p> <p>5. Թեմատիկ գրավոր աշխատանք:</p>	<p>3. Կառուցվածք և գործառույթ: Նյութերի հատկությունները պայմանավորված են դրանցում առկա քիմիական կապերի տեսակով:</p>
<p>Միջառարկայական կապեր</p>	
<p>Չայոց լեզու: Կարողանա կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր (պահանջվող) գաղափարները:</p> <p>Մաթեմատիկա: Կարողանալ աշխատել տոկոսներով:</p> <p>Չամակարգչային գիտություն և թվային գրագիտություն: Աշխատանք տեքստային խմբագրիչների հետ, ցուցադրական նյութերի պատրաստման և համացանցում որոնողական աշխատանքներ իրականացնելու հմտություններ:</p>	
<p>Կապը Չանրակրթության Չափորոշի Վերջնարդյունքների հետ</p>	
<p>Չ4, Չ5, Չ6, Չ7, Չ8, Չ9, Չ27, Չ28, Չ30, Չ31, Չ32, Չ33, Չ34, Չ47, Չ52</p>	

<p>Թեմա 4</p>
<p>Նյութաքանակ</p>
<p>Չիմնական նպատակ</p>
<p>Ձևավորել գիտելիքներ նյութաքանակի վերաբերյալ:</p>
<p>Վերջնարդյունքներ</p>



<p>1. ԶՑ.ՆԱԲ.ՄՆ.1 Սահմանի նյութաքանակ հասկացությունը և նշի դրա չափման միավորը:</p> <p>2. ԶՑ.ՆԱԲ.ՄՆ.2 Պարզաքանի Ավոգադրոյի թիվ հասկացությունը, կապ հաստատի նյութաքանակի հետ, ներկայացնի և օգտագործի մաթեմատիկական արտահայտությունը իսոդիրներ ու վարժություններ լուծելիս:</p> <p>3. ԶՑ.ՆԱԲ.ՄՆ.3 Սահմանի մոլային զանգված հասկացությունը և նշի դրա չափման միավորը, կապ հաստատի մասնիկների թվի հետ, ներկայացնի և օգտագործի մաթեմատիկական արտահայտությունը իսոդիրներ ու վարժություններ լուծելիս:</p>	
Բովանդակություն	
1. Նյութի քանակ: Մոլային զանգված:	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
1. Գործնական աշխատանք 1: Վարժությունների և իսոդիրների լուծում	1. Մասշտաբ, համամասնություն և քանակ: Մասնիկների հսկայական թիվը (Ավոգադրոյի հաստատուն) ընկած է մոլ գաղափարի հիմքում:
Միջառարկայական կապեր	
Չայոց լեզու: Կարողանա կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր (պահանջվող) գաղափարները: Մաթեմատիկա: Կարողանա աշխատել ցուցիչ պարունակող թվերի հետ:	
Կապը Չանրակրթության Չափորոշչի Վերջնարոյունքների հետ	
Չ6, Չ7, Չ8, Չ9, Չ27, Չ28, Չ33	

Թեմա 5
Լուծույթներ
Չիմնական նպատակ

<p>Ձևավորել գիտելիքներ նյութերի լուծելիության և լուծույթների վերաբերյալ:          Չարգացնել գործնական հմտություններ որոշակի կոնցենտրացիայով լուծույթների պատրաստման օրինակներով:</p>	
<p>Վերջնարդյունքներ</p>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Թ8.ԿՅ.Յ.1 Սահմանի լուծելիություն հասկացությունը: Ներկայացնի լուծելիության մաթեմատիկական արտահայտությունը և չափման միավորը:</li> <li>2. Թ8.ԿՅ.Յ.2 Ներկայացնի և բացատրի նյութերի լուծելիության կախվածությունը ջերմաստիճանից, ճնշումից և նյութի բնույթից:</li> <li>3. Թ8.ԿՅ.Յ.3 Սահմանի լուծույթ հասկացությունը և թվարկի դրա տեսակները (հազեցած և չհազեցած):</li> <li>4. Թ8.ԿՅ.Յ.4 Սահմանի լուծված նյութի զանգվածային բաժին և մոլային կոնցենտրացիա հասկացությունները և ներկայացնի դրանց մաթեմատիկական արտահայտությունները:</li> <li>5. Թ8.ԿՅ.Յ.5 Կիրառի լուծույթների մասին ստացած գիտելիքները վարժությունների և խնդիրների լուծման համար (ներառյալ լուծույթի խտություն հասկացությունը):</li> <li>6. Թ8.ԿՅ.Յ.6 Գործնականում իրականացնի հազեցած և չհազեցած լուծույթներ պատրաստի:</li> <li>7. Թ8.ԿՅ.Յ.7 Գործնականում իրականացնի ստանդարտ մոլային կոնցենտրացիաներով լուծույթների պատրաստում:</li> </ol>	
<p>Բովանդակություն</p>	
<ol style="list-style-type: none"> <li>1. Նյութերի լուծելիություն: Լուծույթներ:</li> <li>2. Լուծույթի կոնցենտրացիայի արտահայտման եղանակներ:</li> </ol>	
<p>Գործնական աշխատանքներ</p>	<p>Խաչվող հասկացություններ</p>
<ol style="list-style-type: none"> <li>1. Գործնական աշխատանք 1: Վարժությունների և խնդիրների լուծում լուծելիության վերաբերյալ:</li> <li>2. Գործնական աշխատանք 2: Վարժությունների և խնդիրների լուծում զանգվածային բաժնի, լուծույթների</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Օրինաչափություններ: Նյութերի լուծելիությունը կախված է ջերմաստիճանից, ճնշումից և նյութի բնույթից:</li> <li>2. Համակարգեր և մոդելներ: Լուծույթները բարդ</li> </ol>

<p>պատրաստման (ներառյալ լուծույթի խտության կիրառմամբ) վերաբերյալ:</p> <p>3. Գործնական աշխատանք 3: Վարժությունների և խնդիրների լուծում լուծույթների խառնման, նոսրացման և/կամ խտացման վերաբերյալ, ցույց տալով նաև դրա կապը լուծելիության հետ:</p> <p>4. Գործնական աշխատանք 4: Վարժությունների և խնդիրների լուծում մոլային կոնցենտրացիայի վերաբերյալ, ցույց տալով նաև դրա կապը լուծույթների բնութագրիչ այլ մեծությունների հետ (լուծելիություն, զանգվածային բաժին):</p> <p>5. Լաբորատոր աշխատանք 1: Հագեցած և չհագեցած լուծույթների պատրաստում</p> <p>6. Լաբորատոր աշխատանք 2: Ստանդարտ մոլային կոնցենտրացիաներով լուծույթների պատրաստում:</p> <p>7. Թեմատիկ գրավոր աշխատանք:</p>	<p>Ֆիզիկաքիմիական համակարգեր են:</p> <p>3. Մասշտաբ, համամասնություն և քանակ: Նյութերի կոնցենտրացիան լուծույթում փոփոխվում է լայն տիրույթում:</p> <p>4. Կայունություն և փոփոխություն: Նյութերի լուծելիությունը հաստատուն է որոշակի ջերմաստիճանում:</p>
<p>Միջառարկայական կապեր</p>	
<p>Հայոց լեզու: Կարողանա կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր (պահանջվող) գաղափարները:</p> <p>Մաթեմատիկա: Կարողանա կազմել և լուծել գծային հավասարումներ, աշխատել տոկոսի հետ, կատարել չափման միավորների անցումներ:</p> <p>Կենսաբանություն: Ունենալ նախնական պատկերացումներ կենսաբանական լուծույթների մասին:</p> <p>Ֆիզիկա: Պատկերացում ունենալ էներգիայի անջատման և կլանման վերաբերյալ: Իմանալ նյութի խտության և ծավալի մաթեմատիկական արտահայտության մասին:</p>	
<p>Կապը Հանրակրթության Չափորոշչի Վերջնարդյունքների հետ</p>	
<p>Հ4, Հ5, Հ6, Հ7, Հ8, Հ9, Հ27, Հ28, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ47, Հ52</p>	

Թեմա 6
Քիմիական ռակցիաների տեսակներ(12 ժամ)
Յիմնական նպատակ
Չարգացնել գիտելիքներ քիմիական ռեակցիաների տեսակների վերաբերյալ: Չարգացնել գործնական հմտություններ քիմիական ռեակցիաների որոշ տեսակների օրինակներով:
Վերջնարդյունք
<ol style="list-style-type: none"> <li>1. ԸՑ.ԸՌ.ԸՌԴ.1 Սահմանի փոխանակման և տեղակալման ռեակցիաները: Ներկայացնի չեզոքացման, նստվածքագոյացման և գազանջատմանը ռեակցիաները որպես փոխանակման ռեակցիաների օրինակներ և մետաղների փոխազդեցությունը թթուների և աղերի հետ՝ որպես տեղակալման ռեակցիաների օրինակներ:</li> <li>2. ԸՑ.ԸՌ.ԸՌԴ.2 Տարբերի քիմիական ռեակցիաների տեսակները՝ միացման, քայքայման, տեղակալման և փոխանակման:</li> <li>3. ԸՑ.ԸՌ.ԸՌԴ.3 Գործնականում իրականացնի գազի անջատմով ընթացող տեղակալման ռեակցիաներ: Օրինակ՝ այլումինի փոխազդեցության ուսումնասիրությունն նատրիումի հիդրօքսիդի և/կամ աղաթթվի հետ:</li> <li>4. ԸՑ.ԸՌ.ԸՌԴ.4 Գործնականում իրականացնի տեղակալման ռեակցիաներ մետաղների մասնակցությամբ: Օրինակ՝ երկաթե մեխի պղնձապատում և/կամ պղնձի լարի արծաթապատում:</li> <li>5. ԸՑ.ԸՌ.ԸՌԴ.5 Գործնականում իրականացնի երկու աղերի փոխազդեցությունն ջրային լուծույթում: Օրինակ՝ նատրիումի կարբոնատի և կալցիումի քլորիդի փոխազդեցություն:</li> <li>6. ԸՑ.ԸՌ.ԸՌԴ.6 Կիրառի փոխանակման և տեղակալման ռեակցիաների մասին ստացած գիտելիքները վարժությունների և խնդիրների լուծման համար:</li> <li>7. ԸՑ.ԷՊԹ.ՁԷՅ.1 Սահմանի և տարբերի ջերմանջատիչ ու ջերմակլանիչ ռեակցիաները:</li> <li>8. ԸՑ.ԷՊԹ.ՁԷՅ.2 Կապ հաստատի ռեակցիայի արդյունքում անջատված կամ կլանված ջերմության և՛ նյութաքանակի, և՛ զանգվածի միջև ու կատարի հաշվարկներ ջերմաքիմիական հավասարումների կիրառմամբ:</li> </ol>

<p>9. ԶՑ.ԷՊԹ.ՁԷՅ.3 Ներկայացնի, որ միացման ռեկացիաները հիմնականում ջերմանջատիչ են, իսկ քայքայման ռեակցիաները ջերմակլանիչ:</p> <p>10. ԶՑ.ԷՊԹ.ՁԷՅ.4 Գործնականում իրականացնի չեզոքացման ռեակցիան, որպես ջերմանջատիչ ռեակցիա:</p> <p>11. ԶՑ.ԷՊԹ.ՁԷՅ.5 Գործնականում իրականացնի մալաքիտի կամ պղնձի(II) հիդրօքսիդի քայքայումը, որպես ջերմակլանիչ ռեակցիա:</p>	
Բովանդակություն	
<p>1. Փոխանակման և տեղակալման ռեակցիաներ:</p> <p>2. Ջերմանջատիչ և ջերմակլանիչ ռեակցիաներ:</p>	
Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<p>1. Գործնական աշխատանք 1: Վարժությունների և խնդիրների լուծում քիմիական ռեակցիաների տեսակների վերաբերյալ</p> <p>2. Գործնական աշխատանք 2: Վարժությունների և խնդիրների լուծում ջերմաքիմիայի վերաբերյալ</p> <p>3. Լաբորատոր աշխատանք 1: Գազի անջատմով ընթացող տեղակալման ռեակցիաներ: Օրինակ՝ այլումինի փոխազդեցության ուսումնասիրություն նատրիումի հիդրօքսիդի և/կամ աղաթթվի հետ:</p> <p>4. Լաբորատոր աշխատանք 2: Տեղակալման ռեակցիաներ մետաղների մասնակցությամբ: Օրինակ՝ երկաթե մեխի պղնձապատում և/կամ պղնձի լարի արծաթապատում:</p>	<p>1. Օրինաչափություններ: Քիմիական ռեակցիաները դասակարգվում են ըստ ելակյութերի և վերջանյութերի թվի և բաղադրության:</p> <p>2. Էներգիա և կյուլթ: Քիմիական ռեակցիաները ուղեկցվում են էներգիայի անջատումով կամ կլանումով:</p> <p>3. Կայունություն և փոփոխություն: Քիմիական ռեակցիաների ընթացքու կյուլթերի բաղադրությունը փոխվում է, սակայն դրանց ընդհանուր զանգվածը մնում է անփոփոխ:</p>

<p>5. Լաբորատոր աշխատանք 3: Երկու աղերի փոխազդեցությունը ջրային լուծույթում: Օրինակ՝ նատրիումի կարբոնատի և կալցիումի քլորիդի փոխազդեցություն:</p> <p>6. Լաբորատոր աշխատանք 4: Չեզոքացման ռեակցիան, որպես ջերմանջատիչ ռեակցիա:</p> <p>7. Լաբորատոր աշխատանք 5: Մալաքիտի կամ պղնձի(II) հիդրօքսիդի քայքայումը, որպես ջերմակլանիչ ռեակցիա:</p> <p>8. Թեմատիկ գրավոր աշխատանք:</p>	
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու: Կարողանա կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր (պահանջվող) գաղափարները:</p> <p>Ֆիզիկա: Պատկերացում ունենալ էներգիայի կլանման և անջատման վերաբերյալ:</p> <p>Մաթեմատիկա: Կարողանա կազմել և լուծել գծային հավասարումներ:</p>	
Կապը Հանրակրթության Չափորոշչի Վերջնարդյունքների հետ	
Հ4, Հ5, Հ6, Հ7, Հ8, Հ9, Հ27, Հ28, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ47, Հ52	

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, ՀՀ կառավարության. N 136-Ն որոշում, 04.02.2021թ.:
2. Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման եվ հաստատման կարգ, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշում:
3. Հանրակրթության պետական կրթակարգ, ՀՀ կառավարության նիստի հ. 33 արձանագրային որոշում, 26.08.2004թ.:
4. Հանրակրթական հիմնական դպրոցի «Զիմիա» (7-9-րդ դասարաններ) առարկայի չափորոշիչներ և ծրագրեր (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. հունվարի 20-ի N 40-Ա/Ք հրաման):
5. <<Զիմիա 7,8,9>>, դասագրքեր, <<Տիգրան Մեծ>> հրատարակչություն, 2013,2014,2015թ.:
6. <<Զիմիա 7,8,9>>, դասագրքեր, <<Անտարես>> հրատարակչություն, 2013,2014,2015թ.:

7. Կ.Ավետիսյան, Դ.Մնացականյան, <<Քիմիայի դասավանդումը հանրակրթական դպրոցի 7-9-րդ դասարաններում>>, ուսուցչի ձեռնարկ, Երևան <<Անտարես>>, 2013թ. :
8. Կ.Ավետիսյան և ուր. <<Քիմիայի դասավանդումը 7-9-րդ դասարաններում, սովորենք դասը վարել նոր մեթոդներով>>, մեթոդական ձեռնարկ, Երևան, <<Անտարես>>, 2010թ.160էջ:
9. Next Generation Science Standarts, <https://www.nextgenscience.org>
10. Cambridge O Level Chemistry 5070. Syllabus for 2022. [www.cambridgeinternational.org/olevel](http://www.cambridgeinternational.org/olevel)
11. Cambridge IGCSE Chemistry 0620 syllabus for 2022 [www.cambridgeinternational.org/igcse](http://www.cambridgeinternational.org/igcse)
12. Cambridge International AS & A Level Chemistry 9701 syllabus for 2022, 2023 and 2024. [www.cambridgeinternational.org/alevel](http://www.cambridgeinternational.org/alevel)
13. (IB) Diploma Programme (DP) curriculum. <https://www.ibo.org/programmes/diploma-programme/curriculum/>
14. (IB) Diploma Programme (DP) Chemistry guide. <https://ibo.org/programmes/diploma-programme/curriculum/sciences/chemistry/>

## ՔԻՄԻԱ

### 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Թեմա 1
Օրգանական քիմիայի հիմունքներ
Հիմնական նպատակ
Ձևավորել և զարգացնել պատկերացումներ և գիտելիքներ օրգանական միացությունների, դրանց քիմիական կառուցվածքի, ֆունկցիոնալ խմբի, իզոմերիայի և IUPAC միջազգային համակարգի կանոնների վերաբերյալ:
Վերջնարդյունքներ
<ol style="list-style-type: none"> <li>1. Ք11.ՆՄԲ.ՄԲ.1 Ներկայացնի, որ օրգանական միացությունների մեծ մասը կազմված է մոլեկուլներից, ունենի մոլեկուլային կառուցվածք, որտեղ ածխածին քառավալենտ է:</li> <li>2. Ք11.ՆՄԲ.ՄԲ.2 Սահմանի իզոմերները, ինչպես նյութեր, որոնք ունեն միևնույն մոլեկուլային բանաձև, բայց տարբեր քիմիական կառուցվածք:</li> </ol>

3. Թ11.ՆՄԲ.ՄԲ.3 Պատկերի և տարբերակի իզոմերիայի տարբեր տեսակները (ածխածնային շղթայի կմախքի իզոմերներ, ֆունկցիոնալ խմբի դիրքի իզոմերներ, ֆունկցիոնալ խմբի (միջդասային) իզոմերներ, երկրաչափական ցիս - տրանս իզոմերներ և օպտիկական իզոմերներ):
4. Թ11.ՆՄԲ.ՄԲ.4Ներկայացնի, որ ցիս - տրանս իզոմերիայի գոյությունը բացատրվում է կրկնակի C=C կապի շուրջը ազատ պտույտի արգելակմամբ:
5. Թ11.ՆՄԲ.ՄԲ.6 Բացատրի և ցույց տա օրգանական մոլեկուլներում ածխածնի կարգը՝ առաջնային, երկրորդային, երրորդային և չորրորդային:
6. Թ11.ՆՄԲ.ՆՏ.4 Ներկայացնի և տարբերակի հիմնական օրգանական միացությունների (ածխաջրածիններ, սպիրտներ, էթերներ, ալդեհիդներ, կետոններ, կարբոնաթթուներ, էսթերներ, ճարպեր, ամիններ և ամինոթթուներ) ֆունկցիոնալ խմբերը:
7. Թ11.ՆՄԲ.ՆՏ.3 Սահմանի ֆունկցիոնալ խումբ հասկացությունը, որպես մոլեկուլում ատոմների խումբ, որը պայմանավորում տվյալ դասի միացություններին բնորոշ քիմիական հատկությունները:
8. Թ11.ՆՄԲ.ՆՏ.2 Ներկայացնի տարբեր դասերի ածխաջրածինների, սպիրտների, ալդեհիդների և կարբոնաթթուների ընդհանուր բանաձևերը և հոմոլոգիական շարքը:
9. Թ11.ՆՄԲ.ՆՏ.1 Կիրառի IUPAC միջազգային համակարգի կանոնները օրգանական միացություններն անվանելիս (ներառյալ ցիս-տրանս և R,S):
10. Թ11.ԿԿՅ.ԿԿ.1 Նկարագրի կովալենտային կապի հոմոլիտիկ և հետերոլիտիկ ճեղքումը ազատ ռադիկալների և իոնների առաջացմամբ:
11. Թ11.ՆՄԲ.ԱՏՆ.1 Մեկնաբանի հիբրիդացումը, որպես ատոմային օրբիտալների միախառնում, որը բերում է տարածության մեջ որոշակի ուղղորդվածությամբ ըստ ձևի և էներգիայի համարժեք սոր օրբիտալների առաջացմանը:
12. Թ11.ՆՄԲ.ԱՏՆ.2 Կառուցի մեթանի, էթիլենի, ացետիլենի և բենզոլի մոլեկուլների գնդաձողային մոդելները և ներկայացնի դրանց տարածական տեսքը ածխածնի ատոմային օրբիտալների  $sp^3$ ,  $sp^2$  և  $sp$  հիբրիդացման միջոցով:
13. Թ11.ԿԿՅ.ԿԿ.3 Նկարագրի  $\sigma$ - և  $\pi$ - կապերի առաջացումը էթիլենի և ացետիլենի մոլեկուլներում:
14. Թ11.ԿԿՅ.ԿԿ.5 Համեմատի միակի, կրկնակի և եռակի C-C կապերի երկարությունն ու ամրությունը:



<p>15. Զ11.ԶՌ.ԶՌԴ.31 Տարբերակի օրգանական ռեակցիաների հիմնական տեսակները՝ միացման, պոկման, տեղակալման, հիդրոլիզի, օքսիդացման և վերականգնման ռեակցիաներ:</p>
<p>Բովանդակություն</p>
<ol style="list-style-type: none"> <li>1. Պատկերացում օրգանական նյութերի մասին:</li> <li>2. Ալկանների հոմոլոգիական շարք:</li> <li>3. Ֆունկցիոնալ խմբեր:</li> <li>4. Օրգանական միացությունների անվանակարգ, IUPAC միջազգային համակարգ:</li> <li>5. Կապը օրգանական մոլեկուլներում: Հիբրիդացում՝ <math>sp^3</math>, <math>sp^2</math> և <math>sp</math>: Մեթանի մոլեկուլի կառուցվածք:</li> <li>6. Կառուցվածքային իզոմերիա:</li> <li>7. Տարածական իզոմերիա:</li> <li>8. Կովալենտ կապի ճեղքում:</li> <li>9. Օրգանական ռեակցիաների տեսակներ:</li> </ol>

Գործնական աշխատանքներ	Խաչվող հասկացություններ
<ol style="list-style-type: none"> <li>1. Գործնական աշխատանք 1: Վարժությունների և խնդիրների լուծում: Օրգանական միացությունների անվանակարգ</li> <li>2. Գործնական աշխատանք 2: Վարժությունների և խնդիրների լուծում: Իզոմերիա: Գնդածողային մոդելներ</li> <li>3. Գործնական աշխատանք 3: Վարժությունների և խնդիրների լուծում: Կապը օրգանական մոլեկուլներում: Գնդածողային մոդելներ</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Օրինաչափություններ: Իզոմերների գոյությունը պայմանավորված է ինչպես նյութերի տարբեր քիմիական կառուցվածքով, այնպես էլ տարածության մեջ ատոմների և խմբերի տարբեր դասավորությամբ: Տվյալ հոմոլոգիական շարքի միացությունների</li> </ol>

<p>4. Գործնական աշխատանք 4: Վարժությունների և խնդիրների լուծում: Օրգանական ռեակցիաների տեսակներ</p> <p>1. Թեմատիկ գրավոր աշխատանք: Օրգանական քիմիայի հիմունքներ</p>	<p>ընդհանուր քիմիական հատկությունները պայմանավորված են ֆունկցիոնալ խմբով:</p> <p>2. Համակարգեր և մոդելներ Իզոմերների գնդաձողային տարածական մոդելների կառուցում: Հիբրիդացման գաղափարի բացատրումը մոլեկուլային մոդելների կառուցման միջոցով: IUPAC միջազգային համակարգի կանոնները թույլ են տալիս անվանել միլիոնավոր օրգանական միացությունները:</p>
---	---

<p>Միջառարկայական կապեր</p>
<p>Հայոց լեզու: Կարողանա կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր (պահանջվող) գաղափարները: Ֆիզիկա: Իմանալ լիցքի վանողության և ձգողության մասին: Մաթեմատիկա: Կարողանա պատկերել որոշ մարմինների երկրաչափական տեսքը:</p>
<p>Կապը Հանրակրթության Չափորոշի Վերջնարոյունքների հետ</p>
<p>Մ2, Մ3, Մ4, Մ5</p>

Թեմա 2
Ածխաջրածիններ
Նպատակ
<p>Ձևավորել և զարգացնել գիտելիքներ ածխաջրածինների բնական աղբյուրների, դրանց ստացման, հատկությունների, որակական ռեակցիաների, ռադիկալային և Էլեկտրոֆիլ տեղակալման ռեակցիաների մեխանիզմների վերաբերյալ:</p> <p>Չարգացնել գործնական հմտություններ ածխաջրածինների ստացման և դրանց որակական ռեակցիաների ուսումնասիրման միջոցով:</p>
Վերջնարդյունքներ
<ol style="list-style-type: none"> <li>1. Զ11.ՆԱԲ.ՆՏ.2 Ներկայացնի տարբեր դասերի ածխաջրածինների, սպիրտների, ալդեհիդների և կարբոնաթթուների ընդհանուր բանաձևերը և հոմոլոգիական շարքը:</li> <li>2. Զ11.ՆԱԲ.Մ.1 Բացատրի ու կանխատեսի ալկանների հալման և եռման ջերմաստիճանների փոփոխության միտումը մոլեկուլի չափսի մեծացմանը զուգընթաց ըստ Լոնդոնի դիսպերսիոն ուժերի:</li> <li>3. Զ11.ԿԿՅ.ԿԿ.2 Մեկնաբանի, որ ալկանների ցածր ռեակցիոնունակությունը բացատրվում է դրանց մոլեկուլներում առկա ամուր ոչ բևեռային C-C և C-H կապերով:</li> <li>4. Զ11.ՆԱԲ.Մ.2 Պարզաբանի, որ նավթանյութերը կարող են առանձնացվել նավթից թորման եղանակով՝ օգտագործելով դրանց եռման ջերմաստիճանների տարբերությունը:</li> <li>5. Զ11.ՆԱԲ.Մ.3 Թվարկի հիմնական նավթանյութերի՝ բենզին, լիգրոին, կերոսին, գազոյլ, մազութ, անվանումներն ու կիրառության ոլորտները:</li> <li>6. Զ11.ՆԱԲ.Մ.4 Ներկայացնի բնական և ուղեկից նավթային գազերի մոտավոր բաղադրությունը և դրանց կիրառության ոլորտները:</li> <li>7. Զ11.ԶՌ.ԶՌ.Դ.25 Ներկայացնի ածխաջրածինների և սպիրտների լրիվ այրման ռեակցիաների հավասարումները:</li> <li>8. Զ11.ԶՌ.ՌՄ.2 Սահմանի նուկլեոֆիլ, Էլեկտրոֆիլ, ազատ ռադիկալ, կարբկատիոն, անցումային վիճակ հասկացությունները :</li> </ol>

9. Ը11.ԸՌ.ՌՄ.1 Նկարագրի ՌԲՄ ճառագայթների ազդեցությամբ ավանների քլորացման կամ բրոմացման ռեակցիայի մեխանիզմը՝ ներառելով հարուցման, շղթայի զարգացման և խզման փուլերը:
10. Ը11.ԸՌ.ԸՌ.Դ.8 Նկարագրի քայքայման ռեակցիաները Էթանի, բուլթանի, ցիկլոհեքսանի, մեթիլցիկլոհեքսանի դեհիդրման և մեթանից ացետիլենի ստացման օրինակներով՝ ներկայացնելով ռեակցիաների հավասարումները:
11. Ը11.ԸՌ.ԸՌ.Դ.9 Ներկայացնի կրեկինզը, որպես երկար ածխածնային շղթայով ավանի քայքայում կարճ շղթայով ավանի և ավլենի:
12. Ը11.ԸՌ.ԸՌ.Դ.7 Ներկայացնի ցիկլոավանների առաջին ներկայացուցիչների, ալդեհիդների և կետոնների հիդրման ռեակցիաների հավասարումները:
13. Ը11.ԿՅ.Յ.1 Բացատրի չհագեցած ածխաջրածինների հիդրումը Pt/Ni կատալիզատորի ներկայությամբ, որպես տարասեռ կատալիզի օրինակ:
14. Ը11.ԸՌ.ԸՌ.Դ.1 Նկարագրի ավլենների, ալկինների և զուգորդված դիենների Էլեկտրոֆիլ միացման ռեակցիաները՝ ջրածնի, հալոգենների, հալոգենաջրածինների միացման օրինակներով:
15. Ը11.ԸՌ.ԸՌ.Դ.4 Բացատրի Մարկովնիկովի կանոնը առաջացող առաջնային, երկրորդային և երրորդային կարբկատիոնի կայունության տեսանկյունից:
16. Ը11.ԸՌ.ԸՌ.Դ.23 Նկարագրի ավլենների օքսիդացման ռեակցիան կալիումի պերմանգանատի լուծույթով մինչև դիոլներ:
17. Ը11.ԸՌ.ԸՌ.Դ.2 Նկարագրի, որ բրոմաջրի թեստն օգտագործվում է ավլանները և չհագեցած ածխաջրածինները (ավլեններ, ալկիններ, դիեններ) տարբերելու համար:
18. Ը11.ԸՌ.ԸՌ.Դ.3 Գործնականում իրականացնի մեթանի, Էթիլենի ստացումը և բրոմաջրի և  $KMnO_4$ -ի գունազրկման թեստերը և բացատրի արդյունքները:
